Եթէ մի անգամ ուշադրութիւն դարձնենք մեր ազգի ընդհանուր վիճակի վերայ զանազան կողմերում, մենք կը տեսնենք, որ նիւթապէս այս կամ այն առաւելութիւնը կամ պակասութիւնը մէկդի թողած՝ բարոյապէս կամ հոգեպէս ամէն տեղ Հայերը մի կապով են կապուած իրար հետ։ Մենք կասէինք՝ այդ կապը Ս. Լուսաւորչի անունն է, Ս. Լուսաւորչի Աջն է, որ միացնում կապում է բոլորին մի աթոռի հետ և մի և նոյն սրբութեան յօգով։ Հեռու արևմուտքում արդէն խորթացած լեհաստանցի Հայերի մէջ անգամ, որոնք հայկական ամէն բանը մոռացած են, դեռ պահում են Ս. Լուսաւորչի պատկերը, դեռ տօնում են Լուսաւորչի տօնը, դեռ ամէն ինչ որ «Լատինաց մէջ չկայ և Հայոց յատուկ է, զայն Լուսաւորչի կը սեփականեն»։ դեռ պատահական հայ ուղևոր տեսնելիս, երբ իրենց բուն հայրենակիցներին բարև են ուղարկում «Լուսաւորչի պատրիարքին ձեռքը կը պագնեմ, ասում են, և իր օրհնութիւնը կը հայցեմ, մանաւանդ ուրիշ Լուսաւորչի մայրապետաց բարևներ տարէք» կրկնում են։ Հայազգի օտարացած մայրապետի մէկը «վզէն կուրծքին վերայ կախուած՝ Գրիգոր Լուսաւորչի պատկերը պագնելով, սկսաւ լալ» գրում է մի ուղևոր, և սրտին խորէն հառաչանք մ՝արձակելով, ասաւ. Մենք Հայու երկրէն եկած ենք, հոս կը կորի՞նք։ . . . Գրիգոր Լուսաւորչի շարա-